Ելք – EN/185

Գեղարքունիքի մարզպետ

Կարեն Սարգսյան

EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայքի խմբագիր

Մարիամ Տաշչյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տվյալներ 2017-2021թթ. ընթացքում (վերջին 5 տարիների ընթացքում) Գեղարքունիքի մարզում գորշ արջերի հարձակումների դեպքերի մասին, որոնց տիրապետում է մարզպետարանը: Խնդրում եմ մանրամասնել, թե տարեկան քանի՞ դեպք է արձանագրվել և ի՞նչ բնույթի են դրանք եղել, ի՞նչ վնաս է հասցվել գյուղացիներին, ինչպես նաև՝ ո՞ր գյուղերում են արձանագրվել դեպքերը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայք
Հեռ.՝ 098 50 99 39
Հասցե՝ Վարդանանց 20, բն. 1
Էլ. Հասցե՝ info@econews.am

Կայքի խմբագիր՝ Տաշչյան Մարիամ Հակոբի

09.12.2021թ.

EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայք
Հեռ.՝ 098 50 99 39
Հասցե՝ Վարդանանց 20, բն. 1
Էլ. Հասցե՝ info@econews.am